ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА
АРМЕНИЯ
МАРЗПЕТАРАН
А Р М А В И Р А

0901 Ք. ԱՐՄԱՎԻՐ
ԱԲՈՎՅԱՆ-71
Հեռ.՝ 0237/2-37-16
Ֆաքս 010/28-06-46

0901. Г. АРМАВИР
УЛ. АБОВЯН - 71
Тел. 0237/ 2 – 37 – 16
Факс. 010/ 28-06-46

<< ------ >>---------- 2017թ. թիվ_____

<<ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ >> Հ/ Կ
ՆԱԽԱԳԱՀ, <<ՀԵՏՔ ԹԵՐԹԻ ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ
ՊԱՐՈՆ Է.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Բաղդասարյան

Ի պատասխան Ձեր 14.01.2017թ թիվ ՀՔ-16-12/01 հարցման հայտնվում է, որ Արմավիրի մարզի դպրոցներում կատարվող շինարարական աշխատանքները գտնվում են մարզպետարանի ամենօրյա ուշադրության կենտրոնում և եթե անգամ շին աշխատանքների ավարտից հետո առաջանում են որոշակի խնդիրներ, դրանք անհետևանք չեն մնում, ահազանգի դեպքում ստանում են համարժեք լուծումներ:

Միաժամանակ հայտնում ենք, որ մարզպետարանը ՁԼՄ-ներում տեղ գտած բոլոր հրապարակումները, այդ թվում՝ <<Հետքի>> համապատասխան հրապարակումը դարձրել է քննարկման առարկա, որի վերաբերյալ հարկ ենք համարում նշել, որ Ձեր համապատասխան հարցումը ներառել է 2006-2015 թթ-ին կատարված շինարարական աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունը և 2004թ-ի ծրագրերով իրականացված Լուկաշին համայնքի դպրոցի տանիքի վերանորոգման աշխատանքները չէր կարող ներառվել այդ ցանկում: Նշենք նաև, որ Ձեր հրապարակման մեջ տեղ գտած <<Խոտանով կատարված թիթեղապատման>> աշխատանքների վերաբերյալ արտահայտությունը չի համապատասխանում իրականությանը, քանի որ տանիքը քանդվել և վերակառուցվել է ոչ թէ խոտանով կատարած լինելու, այլ դպրոցի եռահարկ մասնաշենքի ուժեղացման արդյունքում՝ երրորդ հարկի ծածկի ուժեղացման աշխատանքների իրականացման անհրաժեշտությամբ պայմանավորված:

ՄԱՐԶՊԵՏ՝ **Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ**

Կատ՝. Կ.Դանիելյան
Հեռ՝ / 0237/ 2 13 77